## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Փետրվարի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլիին՝ ուղեկցությամբ ՀՀ Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի: Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը:

Ողջունելով Վրաստանի նախագահի եւ նրան ուղեկցող պատվիրակության այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախություն հայտնեց երկու երկրների միջեւ առկա համագործակցության առիթով եւ շեշտեց, որ նման փոխայցելություններն ավելի են նպաստում երկու ժողովուրդների ու պետությունների հարաբերությունների զորացմանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց միեւնույն տարածաշրջանում կողք կողքի ապրող երկու հավատակից ժողովուրդների փոխադարձ զորակցության եւ եղբայրության ամրապնդման կարեւորությունը, ինչին մշտապես ուղղված են եղել Հայ Եկեղեցու ջանքերը:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Վրաստանի հայ համայնքին եւ նրա պատմական ու ներկայիս մեծ ներդրումին եւ դերակատարությանը երկրի տնտեսական, մշակութային, կրթական եւ այլ բնագավառներում: Իր խոսքում Ամենայն Հայոց Հայրապետը գոհունակություն հայտնեց Վիրահայոց թեմի եւ հայ համայնքի եկեղեցական հարցերի կարգավորման ուղղությամբ վերջին շրջանում սկսված դրական գործընթացների կապակցությամբ եւ վստահություն արտահայտեց, որ դրանք կառաջնորդեն հայորդիների հոգեւոր կյանքի խնդիրների ամբողջական լուծմանը:

Վերջում Նորին Սրբությունն արդյունավոր գործունեություն մաղթեց փիար Գիորգի Մարգվելաշվիլիին՝ ի բարօրություն Վրաստանի եւ նրա հավատավոր ժողովրդի:

Հանդիպումից հետո Վրաստանի նախագահն այցելեց նաեւ Մայր Տաճար, եղավ Տաճարի ավանդատուն-թանգարանում:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՏԱԼԻԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Փետրվարի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Իտալիայի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ջովաննի Ռ-իչույլիին: